

## Տ. ՂՈՒԿԱՍ ԱԲԵՂԱ ՋԱՔԱՐՅԱՆ

(ավազանի անունը՝ Վահան)

Ծնվել է 1973 թ. նոյեմբերի 9-ին, Երևանում:

1980-1988 թթ. սովորել է Երևանի Հովհաննես Հովհաննիսյանի անվան համար 52 միջնակարգ դպրոցում:

1988-1990 թթ. ուսումը շարունակել է Խրիմյան Հայրիկի անվան համար 10 հայագիտական թեքումով դպրոցում:

1990 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան և 1993 թ. վերցնելով պարկետում՝ մեկնել է Հայոց Ազգային բանակ, որի ժամանակ մասնակցել է Արցախյան ազատագրման պայքարին, ի մասնավորի՝ Քելբաջարի ազատագրմանը:

1994 թ. վերադառնալով Էջմիածին՝ շարունակել է իր ուսումը Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում:

1996 թ. Սուրբ Ստեփաննոսի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1997 թ. ճեմարանն ավարտելուց հետո անցել է ծառայության Մայր Աթոռին կից ՔԴՔԿ-ում՝ որպես հրապարակչական բաժնի աշխատակից, միաժամանակ մասնակցել կրոնի,ուսուցիչների պատրաստման գործընթացին՝ որպես դասախոս:

1999 թ. աշնանը ստանձնել է ՔԴՔԿ-ի ռադիո-հեռուստահաղորդումների բաժնի պատասխանատվությունը:

2000 թ. հունվարի 31-ին պաշտպանել է Սուրբ Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին» թեմայով ավարտաճառը՝ արժանանալով «գերազանց» գնահատականի: